ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 32

---

*28 փետրվար 2012թ.*

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
2. Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
3. Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
4. Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան
5. Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 800.0քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու, ինչպես նաև հողամասի կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գինը հաստատելու մասին
Զեկ. Ա.Սանթրոսյան

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 33

*28 փետրվար 2012թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ.ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2012թ. բյուջեով չկանխատեսված ծախսերի կամ նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորման նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից կատարել հատկացում: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Դիլիջանի քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից /հոդված 4891/ հատկացնել

- «Փողոցների լուսավորում»/բաժին 06 , խումբ 04, դաս 01/ հոդված 4212 – 1000000 դրամ
- «Գյուղատնտեսություն» /բաժին 04 խումբ 02 դաս 01/ հոդված 4235 – 30000 դրամ
- «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» /բաժին 01 խումբ 03 դաս 03/ հոդված 4212 – 544 դրամ :
- 

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 34

*28 փետրվար 2012թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՊԾ-ի «Սնունդ Աշխատանքի Դիմաց» ծրագրի շրջանակներում Դիլիջանի համայնքների միության կողմից հաստատվել և ներկայացվել է ծրագիր , որի շրջանակներում պետք է կատարվի Դիլիջան քաղաքի Կալինինի, Կամո և Ռիսանողական փողոցների ջրահեռացման համակարգի վերանորոգման աշխատանքներ: Համայնքի մասնակցությունը ծրագրին ապահովելու նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կարճ ժամկետներում կատարել ծրագրով նշված շինարարական նյութերի գնում:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով `

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Դիլիջան քաղաքի Կալինինի,Կամո և Ռիսանողական փողոցների ջրահեռացման համակարգի վերանորոգման ծրագրին համայնքի ներդրումն ապահովելու նպատակով համայնքի 2012թ. բյուջեի ֆոնդային մասից «Ճանապարհային տրանսպորտ» /բաժին 04 , խումբ 05, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 983550 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց`*
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 35

*28 փետրվար 2012թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել Դիլիջան քաղաքի Կամո փողոցի թիվ 52 հասցեում գտնվող համայնքի սեփականությունը հանդիսացող գրադարանի և ակումբի համար նախատեսված նոր վերանորոգված շենքը համալրել գույքով:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Կամո թաղամասի գրադարանի և ակումբի համար գույքի գնման նպատակով Դիլիջան քաղաքային համայնքի 2012թ. բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից /հոդված 4891/ հատկացնել 1000000 դրամ «Մշակույթի տներ, ակումբներ, կենտրոններ»/բաժին 08 , խումբ 02, դաս 03 հոդված 5122 /:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 36

*28 փետրվար 2012թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ.ԲՅՈՒՋԵԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել Հայրենական Մեծ պատերազմի մասնակից թվով 4 կին վետերանների մարտի 8-ի կապակցությամբ տալ դրամական օգնություն:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է.

Տալ համաձայնութուն համայնքի ղեկավարի առաջարկությանը և դրամական օգնություն տալու նպատակով համայնքի 2012թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից /հոդված 4891/ հատկացնել 40000 դրամ «Այլ մշակութային կազմակերպություններ» /բաժին 08 , խումբ 02 , դաս 04, հոդված 4729/ :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

5. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԻՄՈՆ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ N 37

*28 փետրվար 2012թ.*

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 800.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2012թ. փետրվարի 24-ի թիվ 49 որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն էր ներկայացվել Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 800.0քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու մասին հարցը՝ կից աղյուսակում ներկայացված մրցութային լոտով, պայմաններով և մեկնարկային գնով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթներով, Դիլիջանի քաղաքային համայնքի գլխավոր հատակագծին և գոտիավորման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին Դիլիջանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 800.0քմ մակերեսով հողամասը մրցույթի միջոցով կառուցապատման իրավունքով տրամադրել և հաստատել մեկնարկային գինը՝ համաձայն աղյուսակի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

Աղյուսակ.

ՀՀ Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի 2012թ. փետրվարի 24-ի թիվ 49 որոշման

Դիլիջանի քաղաքային համայնքի Բնակավայրերի հողերի կառուցապատման իրավունքի մրցույթ

| Հ/հ | Լոտ | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը /քմ/ | Նպատակային նշանակությունը | Գործառնական նշանակությունը | Օգտագործման նպատակը | Հողամասի տրամադրման ժամկետը | Կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գին | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Լոտ 1/ՔԿ-12/ | Կալինինի 4-րդ նրբ. 9/4 | 0110-0095 | 800.0 | Բնակավայրերի հող | հասարակական կառուցապատման | հասարակական նշանակության օբյեկտի կառուցման | 50 տարի | 40000 դրամ | չկան |

*Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար* *Ա. Մարտիրոսյան*